




ԶՄԻՒՆԻՒՄ 15 ՕԳՈՍՏՈՍ 1902

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԳԻՆ 3. 50 ՂԸ. ՀԱՏԸ. ԱՂ. 2

Դիմացի մեկն ամսու. 1 ին եւ 15 ին հը-
րասարակի :

	Զմեւանիս	Օտար երկիր
Վեց ամսուան, կանխիկ 2.-	2. 50 մեծիս	
Տարուան	4.-	6.-

ԿՐԾԱՏԱՐԱԳՐԱՆԻ

Իջմիր՝ Յարգոյ Գ. Մ. Յ. Եւսեմանի ԳՅ-
րասունց. Եւ. Խմբագրին գրասենեակի :

Դրսերը՝ գործակաջը խնդրուած :

Ամեն ՈՒՂԵՎՃԱՐ նամակը Եւ. հաջոր-
դակցութիւնը պետք է ուղղուին առ Ա. Կ.
Տետեան, ի կիբիս խան :



ԹԵՐԹ ԲԱՆԱՍԻՐԱՆԻ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՀԱՄԸ

Բարեկենդան բառը ինքնին կը
ցուցնէ որ կեանքը աղէկ անցունել
կը նշանակէ, և առ ժամանակիս մէջ
ամէն մարդ կ'աշխատի որ ինքզինք
կըցածին չափ բարեբաստիկ ընէ :

Լօթին՝ մամուլով որ Մեծ. —
Պահքը վրայ հասնելու է, կը բանայ
իր քսակին բերանը որպէս զի իր խո-
հարարին վարպետութիւնը փորձէ :
Կատակասէրը կ'ուրախանայ որ հիմայ
առաւել իր դործ տեսնելու ժամանա-
կըն է : Տրամալք և առեքեսս սըղա-
ւորք. կը համբերեն, որ տեսնեն այն
կամաւոր խենթութիւնները, զորս չին
կընար ի դործ գնէլ : Մանկունք ի-
րենց հօր ծոց կը վազեն տղայական
կեղծաւորութեամբ որ իրենց պղտիկ
դիմակ մը կամ թմբուկ մը կամ դափ

մ'առնուի : Կուսակցութիւնը բոլոր տա-
րին այս միջոցը կը դիտէին որ տար-
ւոյն մնացորդ ժամանակին ծախուցը
ոխն առնեն : Երգեցիկը ասոնցմէ վար-
չեն մնար, և այս երկուքն ալ ամէնէ
աղէկ դործ տեսնողներն են ընտանե-
կան դուարձութեանց մէջ : Գինեմուլք
ամէն օր պէտք է որ քիթերնին և այ-
տերնին կրակի պէս և բերաննուն
հոտը՝ դիւ պէս ցուցնեն : Եւ նորա-
սէրք այս օրերս է՝ առաւել որ պատու-
հասները ու գոները անհամբերու-
թեամբ սպասողուհիներու աշայ սի-
րուն երեւանուն համար հասարակօրէնի
հազուստէ քիչ մ'աւելի աղէկ կը
հաղուին ցուպ և ձեռնոց պակաս չը-
նելով ձեռքերնէն : Թէ որ քիչ մ'ալ
աւելի անուշ բեքել ուզեն իրենց նո-
րասիրական հոմանիւթիւնը միակնոց
(Lorgnon) մ'ալ կը կախեն վզեր-
նէն, թէ և շատ յստակ ու մաքուր
տեսնող զոյգ մ'աղաւնեպիշ տկունք
ալ ունենան :

Ըստնք ալ գէշ չեն անցուներ իրենց
ժամանակնին դիչերուան պարահաս-
դէսներու մէջ, ուր ամէն մէկերնին
զոյգ երնին առած ինչպէս որ պէտք է
մարմիննին կը կրթեն, մանաւանդ Քա-
ռարչուի (Galop) մէջ, ուր կար-
ծես թէ մտրակուած ձիու պէս կը վա-
զեն և թանթուր խմած հիւանդի պէս
կը քրտնին, թէպէտև հրեշտակի
պէս կը խօսին և սատանայի պէս կը
մտածեն : Ըմէն տուն խնդալ խօսալ
կայ, ամէն փողոց երգերու ձայն, և
ամէն ծխնելոյղէ ախորժակայոյղ հոտ,
փողոցներու մէջ խոմբ — խումբ գիմա-

կաւորք կ'անցնին, ոմանք թմբուկներ
բով, ոմանք դափերով, ոմանք վինով
և ոմանք փանդիով և փողերով : Ը-
սոնց մէջ Հերբէլէսներ, Հեկտոր-
ներ, Էքիլէսներ, Ըթենասներ,
Յուլիոսներ և Ըփրոգիտէներ պինտ
շատ կը տեսնուին, մանաւանդ Պալ-
լասներ :

Միմասները, խեղկատափօրէն հագ-
ուած ծաղրածուները, և ապուռնաւոր
դոյներով պաճուածուած անձոններն
ըր' սր անկիւնէն որ դառնաս պիտի
պատահիս, որոնց ամէն ալ աշխատած
է որ իր հանձարը ինչ տարօրինակու-
թիւն որ կըցեր է ստեղծել նէ՝ ի
դործ գնէ, ասոնց մէջ կան նաև սի-
րահարեալ մունջեր, որոնք նոր —
հարսի լաթերով պատուակուած՝ կ'եր-
թան տեսութիւն կ'ընեն իրենց փո-
խադարձ սիրահարելոյ, քանի որ բա-
յէ ի բաց այցելութիւնը խաբա-
նեալ է :

Ըստնք ամէնէ երեւելի բարեկեն-
դանի հանդէսները Խաւրիոյ Միլան,
Հոռովմ և Կափօլի քաղաքներուն մէջ
կ'ըլլար, մանաւանդ Վենետիկի մէջ,
ուր որ վերջին աստիճանի կատարե-
լութեան հասուցած էին : Հոռովմայ
այժմեան փողոցային դիմակաւորութեան
հանդէսները ութ օր կը տևեն :

Միջին դարու մէջ բարեկենդանա-
կան դիմակաւորութիւնները շատ ե-
րեւելի էին, ուր ամէն պատուաւոր
ընտանիք կը դիմակաւորէին և իրարու
տեսութեան կ'երթային շատ ծանրա-
դին հագուստներու մէջ մտնելով :

Ըս կերպով Դիմակնիս ալ առ այ-

ժը՛ իր ազգասիրական ծպտութեան այցին մէջն է, որ ընտանեկան զրօսանայ միջոցներուն իր ցիրուցան ազգին մէջ կը թափառի և կը փնտռէ Ափրոդիտէին Օւաւկը :

ԳԻՄԱԿ

Գիմակը երեսի ծածկոց մ'է, որ թղթով կամ լաթով կը շինեն կաշւապարներու վրայ, և մոմառելով զան վրայէն փայլուն վերնիճ կուտան, որով բարեկենդանի ժամանակ գիմակսէրք կը գիմակաւորին :

Ըսոր գործածութիւնը թէ և նախնի ժամանակները Եւրոպացիք ունէին, այլ ճիշդ չի գիտցուիր թէ որ ժամանակէն իր սկիզբն առած է : Մեր ազգը գործ կ'աճէ զայս բարեկենդանի ժամանակ այն կողմերը՝ ուր ըստ Եւրոպացւոց սովորութիւն եղած է գործ ածելը, ու մեր հին նախահարք չենք յիշեր երբեք որ նախնի դարերուն մէջ գործ ածած ըլլան զայն : Եղիպտոցիք, Յոյնք և Հռոմէացիք ունէին այս սովորութիւնը, առաւել Բաղոսի և Սատուրնական տօնախմբութեանց ժամանակները : Հին ժամանակի դերասանք երեսներն տեսակ տեսակ գիրտերով կը մրտէին, ու առաջին անգամ Լազիլդէսն եղաւ որ գիմակ մայուց Տեսարանին մէջ :

Հնդկաստաներորդ և վեշտասաներորդ դարերուն մէջ գիմակ գրուիլը Եւրոպա հասարակ բան մ'եղած էր և գրեթէ նորեւելի . տիկնայք միշտ ձեռքերնին կիսադիմակ (Loup) մը պիտ' ունենային որ երեսներն փափկութիւնը չաւորուի, և շատ անգամ ծածկելու համար զան՝ թէ որ աներես այր մը լըբութեամբ նայէր : (Ըյս սովորութիւնը՝ բայց առանց գիմակ գործ ածելու, դեռ կը տեսնեմք Արեւելք) : Գիմակի գործածութիւնը արանց մէջ ալ մտած էր նոյն ժամանակները : մանաւանդ պալատականք շատ գործ կ'աճէին, վասն զի կը վախնային որ չըլլայ թէ ճամբան դացած ժամանակնին իրենց դրացի տէրութեանց կողմէ լրտեսութիւն ընդունելը չարութիւն մ'ընեն իրենց : Իտալիան՝ մանաւանդ Վինետիկ ժամանակաւ երեսելի եղած էր գիմակաշինութեան մէջ, բայց հիմա Գաղղիան կը դերազանցէ զան, իր մետաղեայ թելերով և ու

րիշ զանազան նիւթերով ու անճոռնիւթեամբ ձեռակերտած գիմակներովը :

Մեր Գիմակը ո՛չ թելով է, ո՛չ մոմով և ո՛չ ուրիշ նիւթով, այլ միայն գորով ըլլալուն կրնայ իմացուիլ որ ամէն երեւակայելի գիմակաւորութիւնը պիտ' ընէ որ ինքզինք հաճելի ընէ . միայն թէ իր երկդիմաբանական Ափեղցիկեղութեանց համար խոնարհաբար ներողամտութիւն կը խնդրէ, իմացնելով որ իր պաշտօնն է : Իրեն համար ամէն ատեն բարեկենդան է :

ԶԳՈՒՅՈՒԹԻՒՆՔ

ՏԻ՛ւ ԵՐԵ՛ 2.

4. Ը. Ըուրը երախտադէտ կենդանի է : Ըս կենդանին որքան ալ փոքրցները անէր մնացած խեղճ ու զոռմեղի վիճակի մէջ ըլլայ, կամ հարուստ պալատի մը մէջ պահպան կապուի՝ բերանը ոսկորի կտոր մը կամ չոր հացի կտոր մը տաս, չի մոռնար շտաով ու իր երախտադիտութիւնը օր մը կը յայտնէ :

Բ. փոքրցները մնացած շները բընական շարժ մ'ալ ունին, որ երբոր օտարական շուն մը իրենց կողմ դայ՝ մէջերնէն միայն մէկը սկսի հաչել, ամէնքն ալ միաբերան կ'ըսկսին հաչել :

5. Կատու. Ը. Կատու մը միշտ կատու պիտի կենայ, հազցուր, կատու է, կըթէ կատու է, սուպէ, պատժէ, գերժէ կ'ուզես, դարձեալ կատու, սիրես փայփայես նէ ալ դարձեալ կատու է, ինչ որ կ'ուզես ըրէ, դարձեալ կատու, դարձեալ կատու :

Իր տեսքովը վաղեր շատ կը նմանի, իր ընտանութենէ զատ՝ բոլոր բնութիւններն ալ : Տաք գիրք ու մաքրութիւնը շատ կը սիրէ, ու շատ անգամ, լաւագոյն է ըսել, երբեք կըրթութեան ենթակայ չըլլար : Բ. կատուի մը յատուկ բնաւորութիւնը ապերախտութիւնն է, և իր այլաբանական նշանակութիւնն ալ Մատնութիւն և երբեմն Աղաւորութիւն : Իր երկրորդ բնաւորութիւնն է ծուլութիւն, թէ և շատ ալ արագաշարժ է որսի ատեն : Ըյսու բնաւորութեամբ որքան որ կեղծաւորաբար քծնի ու քուքուրայ

դարձեալ կատու է :

6. Ը. Կատուները իրենց ձագերը խնամով կը պահեն որ թշնամեց կուր չըլլան, ինչու որ թէ որ քիչ մ'ուշ մնան ձագուկներուն քով դառնալու արու կատուները կը գիմեն կատուիկներուն վրայ ու կ'ուտեն զանոնք : Բ. Երբեմն կը նայիս կատուի ձագ մը որ հազիւ երկու ամսուան եղած է, պիտ' երկչոտաբար արագաշարժ կապկութիւններ կ'ընէ, մինչև որ գրգէ դբեղ որ հետը կատակես, և հետք կ'ընտանենայ չընտանենար, թէ որ բնութեանը դէմ կատակ մ'ընես, իսկոյն իր ճանկերուն հարուածին համը կ'առնես, և կը զզուիս այսպիսի բարեկամութիւնը շուտ մոռնալ ուղող էակ էն : Թէպէտև իր ծագածու շարժումները դուարձալի են, այսու ամենայնիւ միշտ կատու ծնած է և կատու պիտի մնանի, ինչձը չի կրնար դողնալ մարդոցմէ այն յատկութիւնը՝ որ անդէտ կը ծնի ու սորված կը մեռնի :

7. Ը. Կատուն գող է, շատ անգամ պատահած է որ անհաստալի գողութիւններ ըրած է, ինչպէս հետեւեալները. վառարանի վրայ եփուելու դրուած կաթնայի մէջէ տաք ուտելիքները թոցունելու, ծածկոցի տակ պահուած կերակուրը լափտելը՝ թէպէտև վրան ծանրութեամբ մ'ապահովուած, կասկարայի վրայէ բոցաթաղ կողկէղները (Côtelette) յափշտակելը, և ամբողջ ձուկի և միսերու կտորուանքներ աւարընելը՝ իր ցաղայութեան անհոգ խոհակերի մը : Բ. կատուն սուր երես է. սեղանի վրայ, միս մանրուած կամ ձուկ յըստիւնաւ ժամանակ՝ ամէկտաւ ամէկտաւ առաջ կու դայ, մէկ կը նստի և մէկ հոն - հոս կը շրջագայի հոտառելով, թէ որ ձան չի հանես՝ իր սուր երես լիւթութիւնը կը համարձակի մինչև անգամ ձեռքի կերածիդ կամ լուսցածիդ թաթիկովը ճանկելու, փիփ կ'ըսես կը փախչի քիչ մը ու նորէն կու դայ երեսդ պիտո պիտո նայելով ու աչքերը կիցելով, նորէն փիփ կ'ըսես, կ'երթայ ու նորէն կու դայ մինչև որ ալ կը ձանձրանաս վախոելէ : Գ. Երբեմն, իրեն կերակրեղէնի պատրաստութիւն մը տեսնելու առջի նշանին՝ պոչը մոմի պէս շիփ - շիփ

տակ տնկելով կը վազէ կու գայ, կ'ըսկսի բուքորալ ու պսքը օրըրել, մլաւել, քծնիլ, մէկ մէկ կողմ շէղել ու մէկ միւս կողմ երթալով դարձեալ իր արտաքին քով մօտենալով ու չորս թաթերը քով - քովի բերելով այնպէս մը մէջքը վեր վերցնել որ կարծես թէ սաղաթողցաւ, աս րոպէին տիրոջը ոտքերուն քով կայնած կ'ըսկսի իր գլուխը անոր սրունքներուն շփել, թէ որ տէրը լեարդին կտորը ցուցնէ ու չխայժելով մոռնայ իր ակնածութիւնը անոր դէմ, և մէկ ցաթկեղծն ճանկոտեղծ կամ խածնելով յափշտակել կ'ուզէ զան տիրոջը ձեռքէն, մանաւանդ երբ անօթի է: Աս պարագան կը ցուցնէ որ իր սիրոյն և ակնածութեան վրայ վերստահութիւն չըլլալի, ինչու որ սիրելու ատեն կը խածնէ, կը ճանկոտաւէ ու կը վազանայ:

8. Կատուններուն որսորդութիւնը շատ զուարճալի է, և հասարակօրէն վարպետ ու քաջորս կատունները նպարով աճառներու և մրդավաճառներու շատ օգտակար սիրելիները կ'ըլլան:

Ա. Աղէկ որսորդ կատուն կամաց կամաց հարսի պէս քալելով ու ամէն մէկ քայլին ծակուիլիները հոտուրտալով, երբեմն կանգ առնելով և աջ ոտքը ատեն մը քիչիկ մը դետնէն վեր բռնելով չորս դին կը նայի, ու դարձեալ հետազօտութեամբ հոն հոս կը հոտուրտայ: Առկի խլաճայն ճիւղ մը լծածին պէս, ակնշնորհ տնկելով տակ առնէ կը խաղցնէ որ աղէկ մ'իմանայ թէ որ կողմէ պիտ' ելլէ մուկը: Բ. վերջապէս որսատեղի մ'որոշելով կը համբերէ: Գիտէ որ իր կայնած տեղէն 'ի հարկէ մուկի մը պոչ կամ գլուխ պիտ' երևայ աչքին, վասնորոյ կը համբերէ ատեն մը, առանց ձայն հանելու, առանց ուրիշ բանի մ'ուշադրութիւն ընելու բայց 'իրեն միտ դրած նպատակէն: Գ. վերջապէս, անօթի մուկին մէկը կը բռնի ծակէ մը, բայց երևալն ու ներս փախչելը մէկ կ'ըլլայ, վասն զի, կատուն տեսած է կ'երևի: Գիշակերտաւորը աս միջոցին իր բոլոր կատուական ճարպկութեան մէջն է, կ'ըսկսի իր բնատուրութեան ձիւքերուն համեմատ իր մարմնոյն գիւրքերն ալ փոխփոխել, ինչպէս որ մինչև որսը բռնելը պիտի

տեսնենք: Գ. Աս միջոցին որ մուկը կը տեսնէ, իր նստած տեղէն միայն առջի երկու ոտքերուն վրայ ելլելով գլուխը վեր կը անկէ ու կը համբերէ, ու երբ որ կը նայի որ աս գիւրքը յոգնեցողիչ է դարձեալ կը նստի վար միշտ աչքերը դէպ 'իր որսը անկած: Ե. Անօթի մուկը կամ այսպէս ըսենք հարկը ստիպող մուկը, նոր ջանք մ'ալ կ'ընէ դուրս ցաթկելու, բայց կը նայի որ կատուն հոն է ու խիղջն ներս քաշուելու կը պարտաւորի: Զ. Հոս կատուն սիրտ կ'առնէ և օձաբար քանի մը քայլ առելի առաջ կու գայ - ալ չի նստիր, չորս ոտքերուն վրայ կայնած՝ գլուխը վար կը խոնարհէ մինչև որ թուրը առջի երկու թաթիկներուն վրայ կը կռնի: Չայն ձուն չի լուրի և անշարժ արձանի պէս կը կենայ, և միակ շարժումը որ կը նշմարուի իր պոչին ծայրն է որ շուտ շուտ աղին անդին կը խաղցնէ: Հոս սարգի մը ճանձին վրայ ցաթկելու պատրաստուած ատենը գիտողութիւնը ինչու չափ արժանաւոր միջոց մը կը ներկայանայ: Ե. Մուկը դարձեալ կ'երևայ և այս անգամ առելի համարձակ է: Կատուն իր վազրանման թեթեալարժեքութեամբը գլուխը անդալաբար յառաջ մղելով իր մարմնոյն գիւրքը այնպէս մը կը զետեղէ, որ հաւաստի է, որ իր յարձակմանը մէջ չի պիտի սխալի, թէ որ որսը իր անվախութեանը մէջ հաստատ' քիչ մ'առելի դուրս ելլելու համարձակի: Բ. Կատուն անշարժ գիւրքը թէ մը կան միամտութիւնը կամ թէ յանգիշտութիւնը կը քաջալերեն զինք. նայիս մուկը իր մարմնոյն կէսը դուրս կը հանէ չի հաներ՝ կատուն է յանկարծ վրան կը ցաթկէ ու իր աշխատութիւնը կը պսակէ: Միացորդ մասը շատերը տեսած են:

9. Ա. Կատուն բուհ-հանդոյն աչքերը՝ մթութեան մէջ աղէկ նկատող են: Բ. Բռն որ ժամանակակից մարդարէներնիս աս կենդանեաց բնութիւնը ունենալ չուզէին, դոնէ անոնց աչքերը ռննեալով պիտի բաղձային որ լայկերին դոսապոյտ անբեղոյթ հանդոյնները նշմարեն աղբի մը մէջ: Գ. Աս կենդանին անշուշտ չստատուածի մը նուիրած է. թէ որ Գիմակին մարդ Զարասիրութեան,

Կեղծաւորութեան, Անհատաւորութեան, և Վրէժխնդրութեան նուիրական կենդանի մ'է պիտ' ըսեր: Անշուշտ այն Ամենակարող Լալը աս անասուններն ալ ասանի բաներու հարկաւոր ըլլալու համար ստեղծած է:

Շարունակելէ

Պ. ՀԼ. Բ. ՍՓԻՐԸՅ

ՀԱՄԼԻԹ

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Նշանակէ՛ք. - Թաղաւորական պալատան

մէջ սենեակ մը:

ԹԱԳԱՌՈՐ, ԹԱԳԱՌԱՆ, ՀԱՄԼԵԹ,

ՊԱՆՈՒՅՈՍ, ԼԱՐՏԵՍ, ՎՈԼՈՒՄԱՆՏ,

ԿՈՒՆԵԼԵՍ, ԼԱՐՏԵՐ և ՍՊԱՍԱՌՈՐՏԵՐ

էն հոն:

Թագաւորութեան Համլէթի մեր սիրելի եղբոր մահուան յիշատակը դեռ չի մոռցուեցաւ, որուն համար սրտերնիս ցաւով լցուած և մեր բոլոր տէրութեան դէմքը միակերպ տրամուլթիւն մը պատած է. այսու ամենայնիւ, շրջահայեցութիւնը բնութեան հետ այնքան պինտ կառնեցաւ, որ մենք խոհեմադոյն կակիծով՝ իւր վրայ խորհած ատեննիս, մեր վրայօք ալ յիշատակութիւն ընելով կը մտածենք: Վասն որոյ, ժամանակով մեր քոյրը, ու հիմայ թաղութիւնիս, այս պատերազմասէր տէրութեան կայսերական հասոյթը նկատուհի պըրին, միայն մէկ բարեբաղդ և ըստ գիտաց նայուածքով մը, յուզարկաւորութեան ատեն ուրախութիւնը, և հարսանեաց ատեն՝ երջոյ տրամալի եղանակներն իրարու խառնելով, և հաճութիւնն ու տրրամութիւնը զուգակշիռ բռնելով՝ մեր կնութեան ընտրեցինք. որով ձեր խոհեմափայլ ընթացից ալ տրդելք մը չեղանք, ինչու որ, այս գործին հետ անարդիւ առաջ գացին. - որոնց բոլորին համար, մեր շնորհակալութիւնները կը ներկայացնեմք:

Հիմակ, ընկերք, զիտէք զերիտասարդ Ֆորթիպարաբը - որ մեր արժանաւորութեան վրայ անտեղի կարծիք մ'ունենալով, և կամ յուսալով, որ մեր սիրելի եղբոր մահուամբը, տէրութիւննիս խախտեալ ու կանոնաւոր ընթացքէն դուրս ելած է, ասանկ

չեն մտածմունքներով քրքրուած իր շահը փնտռելով, մեզ գետնան կը խրկէ ու կը ձանձրացնէ, որ իր հօրը կորսնցուցած այս բոլոր երկիրները՝ որոնք որ մեր քաջ եղբայրը բռնի օրինաւոր դաշտմբ վանտկած էր, նոյնն են տալու միտք ընեմք: — Այս քանս ասոր վրայօք:

Հիմայ դանք մեղի և հիմակուան ժողովքնուս վրայօք խօսինք: Ահա աս դործոյն ծանրակշռութիւնն: Մենք հոս տեղացի Վորվէկիա՝ երիտասարդ Ֆորթինարասի հօրեղբոր դիր կը խըրկենք: — որ հիմայդացած ու անկողինները մնացած ըլլալով՝ իր եղբորօրդւոյն աս բաներուս վրայօք ունեցած դիտաւորութիւններուն լուրն առնելու ժամանակ չունի. — որ իր բռնած ճամբուն արդեւ ըլլայ. ասոր մէջ իր հարատակաց դործողութիւն բոլոր համեմատական ցուցակները նշանակուած են. — և հիմակ կը խրկենք զձեզ, բարի Առնոնիոս և Վօլթիմանա, իբրեւ պատգամաբերք այս մեր հաշտասէր ողջունից առ ծեր թաղաւորն Վորվէկիոյ, որուն հետ, աս ընդարձակ դործոյ նպատակին ներածէն աւելի՝ ուրիշ անձնական զօրութեամբ մը դործ տեսնելու իշխանութիւն չենք տար ձեզ: Եթեմք բարով, նայինք որքան շուտ պիտի կատարէք պարտաւորութիւննիդ:

Առն. Վօլթ. Ասոր և ուրիշ ամէն բանի մէջ մենք մեր պարտքը պիտի ընենք:

Թաղա. Ասոր վրայ կասկած չունիմք. Աստուած հետեւեալ ըլլայ երթաք բարով:

ԱՕԼԵԻՄԵՆՍ և ԿՈՌՆԵԼԻՍ ԻԵՒԷ:

Հիմակ Լաէրտէս, ինչ որ լուր առնիս նայինք, ըսելիք մ'ունէիր, ինչ էր ան, Լաէրտէս, մի կարծեր, որ Տանիմարքայի թագաւորին առջև քու իրաւունքներդ առաջ բերես ու շնորհք մը չընդունած քաշուիս. մինչև հիմա ինչ խնդիրք ունեցած ես, Լաէրտէս, որ քաղձանքը ըլլար՝ ու չի կատարելի Գլուխը սրտին հետ այս քան վճարելութիւն չունի և ոչ ձեռքը բերի հետ այնքան դործակցութիւն, որքան որ Տանիմարքայի աթոռը քու հօրդ հետ Ուղածդ ինչ էր նայինք, Լաէրտէս:

Լաէր. (Գոստափառ տէր, ձեր

թոյլտուութիւնը և շնորհքը կը խնդրեմ որ նորէն Գաղղիա դառնամ, որիկէ թէև հաճութեամբ ելայ Գանիայ, որ ձեր թագաւորութեան դէմ ունեցած պարտաւորութիւններս առաջնցանեմ, այսու ամենայնիւ, հիմակ պէտք է խոստովանիմ, որ երբ որ այս պարտքըս կատարեցի՝ իմ մտածութիւնս ու բաղձանքս նորէն դէպ'ի Գաղղիա հակամիտելով, զանոնք ձեր վեհափառութեանը հրամանատուութեան ու զիջմանը առջև կը խոնարհեցնեմ:

Թաղա. Զօրմէդ հրաման առնիր: Պրոնիոս ինչ կ'ըսէ:

Պրոն. Իս պիտո շատ ստիպելով՝ թախանձալին աղաչանքներէն ետք իմ դժուարահաճ հրամանս առաւ, աէր իմ, ու վերջապէս իր կամքը չի կտրելով հաւանութիւնս առնի, կը խըրկրեմ որ հրաման տաք իրեն երթալու:

Թաղա. Պատեհութիւնը մի փախցընէր, Լաէրտէս, հիմայ անտնալ քուիդ է, և ուզած բաղձանքդ կը շնորհեմ քեզ, ուզածիդ պէս բռնեցուր զանոնք, — Գանք հիմակ քեզի, եղբորորդիս ու զաւակս Համլէթ, —

Համ. Անկէց աւելի (ձեզ կողմ) աղղական՝ բայց անկէ պակաս բնական:

Թաղա. Այդ ինտոր բան է, որ գեոտրտմալից ամպերը վրայէդ չեն փառատեր:

Համ. Ինչ հակառակը, վեհափառ տէր, պիտո արեւուն մէջն եմ մնացեր:

Թաղա. Սիրտուն Համլէթ, այդ գէմբիդ գիշերային երեւոյթը մէկ-գինետէ, ու բարեկամի աչքով նայէ Գանիոյ վրայ, ալ այդ կախած գէմբիդ վրայ պատած տրտմութեամբդ՝ քու ազնիւ հօրդ քայլափոխերը փոշեաց մէջ մի փնտէր բնաւ, շատ աղէկ դիտես, որ հասարակօրէն բնական բան մըն է, որ ո՞վ որ կ'ապրի՝ պէտք է որ մեռնի և բնութեանս մէջէն անցնելով՝ յաւիտենականութեան քով երթայ:

Համ. Անշուշտ, տիկին, բնական բան է:

Թաղա. Հապա անանկ է նէ՛ ինչու համար քու վրադ մասնաւոր վերապով մը կ'երևի:

Համ. Կ'երևի կ'ըսէք, տիկին, չէ՛, չ'երևիր, այլ, ճշմարիտն ալ այն պէս է, ինչ է գիտեք, բարի մարի-

կըս, միայն իմ մրտած վերաբերու, և կամ սեպուղին հազ մը՝ սովորական զգեստներս, ու հասկտեալ շնչառութեան հողմային հառաչանքը, և աչաց անտաճոս աղբիւրները, ու դիմացս վշտացեալ բերմանց տեսնուած քը՝ իրենց բոլոր տրտմութեան երևմունքներովը, կերպարանքներովը, և եղանակներովը, կարող չեն իս ճըմարտապէս երևցնել: Այս բաները, ճշմարիտը, կ'երևան՝ ըստ որում այն պէս դործողութիւններ են, զորս մարդ իւր վրան կրնայ ցուցնել, սակայն ես ներսս այնպէս բան մ'ունիմ՝ որն որ անցեալը կը ցուցնէ, ոչ միայն ասոնք, այլ և արամութեան կազմութիւններն ու զանազանութիւնները:

Թաղա. Համլէթ, լուսհօգի հօրդ վրայ ըրած այդ սգային պարտաւորութեանդ համար ունեցած բընութիւնդ՝ դովելի ու սրտաշարժ է, բայց աս ալ գիտցիր, որ հայրդ ալ հայր մը կորսնցուց, և ան ալ՝ իր հայրը կորոյս. միայն թէ անոնցմէն ետք ամբողջները՝ որդիական պարտաւորութեամբ, մինչև սրտշեալ ժամանակ մը զիջանող կսկիծով մը սուգ բռնել պէտք են. բայց անանկ անողբելի պիտադուլութեամբ մը կամակոր կսկիծ ընելու յարատեւելը՝ մարդկութենէ գուրս ցաւիլ մըն է, Աստուծոյ առջև պիտո անհաճոյ կամք մ'է: Վեհատեալ սիրտ մը, անհամբեր խելք մը և տկար ու անկիրթ իմացութիւն մը կը ցուցնէ: Ինչ բանի կրնայ ծառայել, թէ որ մեր այլանդակ ներհակութեամբը՝ այնպէս մեր բընութեան մէջ պիտո հասարակ ու անմէն օր աչքերնուս առջև անցած բանը, մեր սրտին ցաւ մ'ընենք նէ, ըստ որում կը տեսնենք որ պիտո չնչին երեցած բան մըն է: Օգնչ կեցիր, ըրածդ՝ Աստուծոյ դէմ յանցանք մ'է, մեռելոց դէմ պակասութիւն մը, բնութեան դէմ պակասութիւն մը՝ որուն վրայ իրաւաբանէն իսկ ծիծաղելի է, որու հասարակ դրութիւնը՝ հարց մահն է, և որ առաջին մեռողէն մինչև այսօրուան մեռող դին՝ անընդհատ կը պոռայ, թէ Աստուծոյ ըլլալ է: Վասն որոյ, կ'աղաչեմք զքեզ, որ աղանդայ կսկիծը դետին զարնես, ու մեզ հօր տեղ դնես, քանզի, թող ամէն մարդ գիտնայ, որ մեր ա-

Թոռոյն անմիջապէս յաջորդէ դուն ես, եւ ես ալ նոյն սիրով իմ սիրտս քեզի հետ կապած եմ, ինչպէս որ հայր մ'իւր սիրական որդին ազնուական սիրով կը սիրէ: Քու նորէն Վիթթէն պէրկի դարձաւ զիւրաւորութիւնը մեր քաղաքացիներու հակառակ է. անոր համար, մեր պաշտականաց ղեկավարը, եղբորորդիս, դաւաճեալ, քեզ ազնուական այս է, որ հոս տեղս մեր աշտոյ միջնորդութեան ու հաճութեան առջեւ կենաս:

Թագու. Համէթ, մօրդ աղաչանքները թող փութի չեթման, կ'աղաչեմ մեր հետը կեցիր, Վիթթէն պէրկի մ'երթար:

Համ. Տիկին, ամէն բանի մէջ բոլորով սրախ պիտի հնազանդիմ ձեզ:

Թագու. Տեսնո՞ւք. ան է ուրախութիւնը հաճելի պատասխանը. դուն ալ մեզի պէս Տանիմարացի եղբի:

— Տիկին, նայեցէ՛ք, Համէթի այս վեհաճանաչական և անբռնաբար հաւանութիւնը՝ սիրտս ուրախութեամբ կը լեցնէ, որուն կենդանութեանը՝ Տանիմարացիք այսօր այնքան ուրախութեան ձայներով գիտի չեն լսներ, որ քանով որ մեծ թնդանութիւն թնդիւնը ամպերուն մէջ որոնայ պիտի, ու թագաւորին բաժակը՝ երկային օրոտ մունքներ կրկնաբանելով, երկինք միայն իրեն արձագանգները պիտի տան: Ելէք երթանք:

Թագաւորը. Թագուհին, Լոթեթը, և Մարտիրոս, Պաւստոս, և Լաթեսիս ինքեմ:

Համ. Ո՛հ, այս պինդ հաստատուն մարմնոյս միտն ալ ստունամանեաց պէս պիտի հալի երթայ և ինքնիրենը վար պիտի ցօղէ. եթէ ո՛չ, Յաւիտենականութիւնը, իւր օրէնքը՝ անձնասպանութեան դէմ կարգէ. ո՛հ, Բատուած իմ, ո՛հ, Բատուած իմ, աս աշխարհիս բոլոր սովորական վայելմունքները ինսոր ձանձրալի, հնցած, անհամ և անօգուտ կ'երեւան ինձ: Ըփսո՛ս. ափսո՛ս. վայրենի դաւաճեալ լեցուն պաքտէզ մ'է, որոնք անմաշկ մնալով քեզիքեն մինչև սերմ թափելու ժամանակուն կը հասնին. բնութեան մէջ ամէն բան կ'աճի ու կը բեղունանի և բոլորովին կը լեցնէ զան:

Եսքանի ալ պիտի երթայ եղբի: Հազիւ թէ երկու ամիս եղաւ, չէ,

այնքան ալ չէ, դեռ երկուք չի կայ, այնպէս չնաշխարհիկ թագաւորին մոտնիւ. որ հիմակ գիտես թէ ներկային քովը՝ երգիծանաց մէջ Հիւպերիոն (1) մ'եղեր է, մօրս այնքան սիրելին, որ երկնից հօղմբուն ներել չէր ուզէր բնաւ որ անոր երեսին վրայ ստակութեամբ այցելութիւն ընեն: Երկինք. երկիր. յիշեմ. աս բաները, մայրս հացկաթալութիւն կ'ընէ եղբի իրեն, որպէս թէ իր կերած հացին համար ունեցած ախորժակին յորդու թիւնը, իր կերածովն ալ աւելի բազմապատկած ըլլար, այսու ամենայնիւ, դեռ ամիս մ'անցաւ չանցաւ — ո՛հ, թող ալ չի մտածեմ աս բաները. — Բնաւորութիւն, կին է անունը:

(Շարունակելի)



ԹԵՐԹ ԵՊԵՂՅՈՒՆՆԵՐԵՆԵՐ

ՈՍԿԻ ՊԵՆՏԵՆ ԵՊԵՂՅՈՒՆՆԵՐԵՐ

1. Կարապետ, երկայնքանութիւնը. երկրի մասնութիւնը. երկրի մասնութիւնը, հենգութիւնը, և ծաղիկը ու նոյնպէս զինքն է:
2. Ինչ որ անձնակ է, ան ինքնայն է:
3. Միայն ընդհանուր օգուտը նկատէ:
4. Բնականութիւնը զգուշութեամբ մեղմոր: Գեղարու ինքնութիւնը ու անոր: Գեղարու անցնողի՝ Գեղարու երգէ:
5. Միայն կարծիքն է և աղբար:
6. Մտքերը ներել են. երբոր ազնային իմ ճանաչող բարեւ ինքնեւ համար. լեզու իմ ԼԵՆԻՆԻՔ՝ լեզու լեզու է:
7. Թէ որ բառերը յարմար և քիչ աղան է, քիչ և 100 ինքնութիւնը երկնից բարեւութիւնը:

Մնացորդը ուրիշ ինքն:

ՆՈՐ ՊԱՐԱԿԱՆԱՐԱՐԱՆ

Ընտոյս մէկէն սկսեալ, վերոյիշեալ մականունով նոր հաստատութիւնը, 2000 հօգիւ մը չափ բազմութեան հաւանութեամբ բացուեցաւ, հայոց Մայր Եկեղեցիին գիմարը, 'ի Գում—Քաբու, Կոստանդնուպոլիս: Ըստ հաստատութիւնը զիշեր ցորեկ բաց է, բայց զիշերուան ինձոյքները աւելի ցոփական են, քանզի մէջի

բնակիչքը, կամ այսպէս ըսենք, առ ժամանակեայ Պարահանդիսապահատէրերը ամէն ջանք 'ի դօրծ դրած են որ զիրենք պատուողները դո՛հ ընեն, ինչու որ շատ շոտյաբար մեծարանքներ ընելու մեծ պարաստութիւններ տեսած են, արդէն միջին մեծ սրահին մէջ կարգաւ շարած ըլլալ պէտք են դրացեաց աւելցնելն որքան իրենց համար համադամ երեցած բաներ դրած են նէ, այսինքն սոխերու կճեպանք, հաւկի կեղեանք, չոր ոսկորներու կտորուանք, նուշի, ընկուզի, շագանակի կրծուած պատիճներ, և ուրիշ ասոնց նման զարմանահրաշ համամունք: Գիշերները ըլլալիք լուսաւորութիւնը չիպիտի կրնայ դերազանցուիլ, ըստ որում Տարտարոս պիտի լուսաւորէ: Բոլոր դռներուն և պատուհաններուն վերին սեմերը, առաստաղները և անկիւնները զարմանաքանչ ձեռակերտուած լիք պիտի զարդարուին, ինչու որ սարգերուն վարպետները ամէն ջանք պիտի ընեն որ իրենց ամենէ բարակ և շոտորհալի հիւստածներովը ոնտոյնան կեն: Կան նաեւ պատրաստուած ուրիշ զանազան սենեակներ, թէ Կանանց և թէ Երանց համար, թէ Թոռիկ խաղալու, և թէ Երեւոյ թէ Ուտեղեաց և Լումբեաց և թէ Պաճուճանաց համար:

Գիտ. 15 է վար երիտասարդք և 21 է վեր օրիորդք չեն ընդունուիր: Ծառայից համար ներմտութիւն կայ թէ որ ձեռքերին մէյմէլ մուկ երսուլու ծուղակներ ունենան: Բոլոր ըզբօսանաց ժամանակ դռները չից պիտի մնան: Գոնապանները և կարգ կանոն պահող իւրաքանչ Գերազանցները՝ միաւորներն են առայժմ, և երեւելի երաժիշտներն ալ՝ մեղեդները:

Վարչ. Կերպարութեան

Եղգատեացներուն համար, ձրի: Եղգատիւրաց համար, արտասուաց չեթք: Օրիորդաց և տիկնանց համար, աղբարութիւն:

Թէ որ վերոյիշեալ նոր դաստեղին յիրաւի տեղի ունեցած է, ինչ զարմանալի բան որ, Սամաթիա ինքն էր, ազգային Պատրիարքարանի փողոցի մը մէջ, ասանկ բաներու թոյլտուութիւն կու տայ:

(1) Ապոլոն:

Դիմակի ցերեին հեռագրական ջուրերը
Կ. Պոլս. 2 Օգոստոս 1862 ժ. 13. օ. ա.

Աղային Սահմանադրաւոր երկրաստորութիւնը հեռագրաւոր անգագար ձեռքը բռնած խոհեմութեան ծակէն նշմարածը շատ աղէկ չի կրնար կոր տեսնել, քանզի կասկածի ապակին՝ քերթին կողմէ կտոր մը անհոգութեամբ փոշոտած ըլլալուն անհամբերութեան միջոցը չի ներեր է որ մաքրէ։ Ամէն բան յաջող կը յուսացուի։ Եւրոյ՝ խաւարելոց աչքը խտրողելու է կ'երեւի։ Գալ անդամի լուրերուն սպասէ։ Հոգ լսուեցաւ. Պատասխանէ։

Կէր

ՁԱԹ—ՁՈԻԹ—ՁԻԹ

ՈՒՂՈՒԹՅՈՒՆ, Գրտի քաղաքները թերթերնուս համար դործակալներ, որոնց աղղասիրութիւնը՝ միայն նոյնին դինը ժողովելով մեզ հասցնելու պայմանաւ դո՛՛հ ըլլայ պիտի։ Տարեկան վարձք չի կայ, ոչ ամսական, ոչ անդամային։

ՈՒՂՈՒԹՅՈՒՆ, Օմիւսնիոյ մէջ սըրունքներնուն վատհասող կտրիճներ, որոնք բարեհաճին փողոցներուն մէջ թերթերնուն թիւերը վաճառելու, որ պաշտօնին համար վարձք պիտ' առնեն նոյնին ընթերցումը։

ՈՒՂՈՒԹՅՈՒՆ, Այնպիսի սագափետրադրիչ դրողներ (թէ և հարկաւորութիւն չունենք) որ Ափեղցըփեղնիս կանոնաւոր պահելու համար կարենան աշխատիլ զիշեր ցորեկի այնպիսի մարքարէական ստալամներ զըրելու որոնք ետքէն կարենան զիշերք բոլորովին սուտ հանել։ Որքան ծիծաղալիք յօդուածներ դրեն, այնքան նախադասելի են։

Վարձք՝ որքան որ ստորագրուող չի դանուի այնքան ուրախ պիտ' ըլլան։

ՈՒՂՈՒԹՅՈՒՆ, Երբ մենք լքանենք, այնպիսի խմբադիր մը, որ Ապեղէսի վրձինը միայն կարենայ հասկըցնել իրեն՝ իւր պարտքը, որ մեր պարտքը գեռ ինք չի ճանչցած, մեզ զան ճանչցնել ուղէ։

ՈՒՂՈՒԹՅՈՒՆ, Մարդ մը, որ իր ձեռքի գործիքը իր ձեռքի գործը գործել սորվեցնելու տեղ՝ նոյնով իր աչքը փորել սորվի։

ԱՅՆ արհեստը համաշխարհական

Արտադրողներու (Expositon Universelle) մէջ մեծ պատիւ կրնայ վաստակիլ։

Ուղղութիւն՝ Տ. Խ. Լաֆաուի. Թ. 96. Անարդարերոգործայ Հրապարակ։

ՈՒՂՈՒԹՅՈՒՆ, 1843 թուականէն մինչև հիմայ Հայերէն լեզուաւ տըպուած պարբերական թերթերու աւելորդ թիւեր, հին կամ նոր հոգ չէ, կ'օգտէ որ պատուած, աղտոտած ու մաշած չըլլան, ամէն մէկ թիւ՝ իր յաւելուածով, թէ որ ունենայ, ¹/₈ դուրուշ, իր ճամբու ծախքով մէկ տեղ։

Ուղղութիւն՝ զրասենեակ Դիմակի, Օմիւսնիա։

ՈՒՂՈՒԹՅՈՒՆ, Այնպիսի անձ մը, որ սլառճառ ըլլայ այսքան դարբէ՛ի վեր հայ աղղին մէջ արմատացած անմիաբանութիւնը՝ բոլորովին ջնջելու կերպ մը հնարելու։ Թէ որ այնքան աղղասիր ու բարեսիրտ է որ արկտուր մը չընդունի, գէթ պէտք է հաճի որ իրեն համար աղամ անդեայ կոթող մը կանդնուի։

Ուղղութիւն՝ Հայասիրական Բնիկերութիւն։

ՈՒՂՈՒԹՅՈՒՆ, Սրբադրիչ մը, որ 43 օրը անդամ մը թերթիս սպաղրական փորձերը զգուշութեամբ աչքէն անցունէ պիտի, առանց աչքը ծակելու, որ մէջը տառասխալ չի մնայ։ Վարձք՝ սրբադրած ժամանակ չիւրնդայ պիտի։

ՈՒՂՈՒԹՅՈՒՆ, Հայ կամ օտարաղղի հայտեր, փեղեղփեղահաճ արուեստագէտէ մը, այնպիսի սրտակեր մը, որ Դիմակի հանդէսնու ճակատը դըրուելու չափ բաւական ըլլայ, փորուածքը հաստ բարակ հոգ չէ, կապարի կամ տօսախափայտի վրայ, բայց հեռեկեղծ զիտողութիւն ըլլուի պիտի։

Գէմքին կէսը խնդացող պիտ' երևայ և կէսը լացող, և բոլորը մէկէն ծիծաղաւիթ։

Աչքերուն համար բան չենք ըներ, ըստ որում զիտեն որ երկու հասկըր ծակ աչքեր են, բայց ծակաչք չեն։

Յօնքերը՝ զոյգ մը գալարահիւս օձեր պիտ' ըլլան։

Քիթը՝ հասարակօրէն անճոռնեղիմութեանց (Caricature) օրինակ մը, այս տարբերութեամբ միայն՝ որ անոր

երկու կողմէ, սինա մեծ դոններու վըրայ երեցած լայնաձիգ կամարներու պէս երկու ծակերուն վրայէ՝ այնքան ճիւղաւորած ըլլայ որ իր ճակատի բաշերը վրան հիւսուին։

Բերանը՝ դժօնքի պէս բաց, որկէ ամէն բան հոսի, աս հոսածնեւուն մէջ։

Լեզուն՝ այնքան դուրս ցցուած և երկնցած, որ աստիճանաբար ծայրը պինտ սուր երեւայ ու դրիչի պէս կըտրուած ըլլայ։

Ճակտին երկու կողմը երկու հաստ երկայն ու ծայրերին բազմահեծ եղջիւրներ, որոնց մէկին վրայ պիտի կարգացուի Աշխարհք և միւսին վրայ Աշխարհ։

Ճիշդ երկու եղջիւրներուն կատարներուն ծայրը՝ Հոգոսի արձանին պէս՝ անկուած կայնի պիտի Միմոսը իր ոտքերուն մատերուն ծայրերուն շօշափմամբ։

Թէ որ վերոյիշելոց յարէ նաև ինչ որ կրնայ իր խելքն ալ ստեղծել, որ պէս զի աւելի ճառագայթարձակ հանգիստայ՝ ալ աւելի հաճելի կ'ըլլայ։

Ստոր փոխարէն՝ մեր կողմէ ալ կը խոստացուի այն արհեստագետին, առատաձեռնօրէն խրկելու իրեն օրինակ մը իր Դիմակին Դիմակէն։

Ստոր խօսք մ'եւլա թէ Մեսրովպեան և Հոլիփսիմեանց դպրոցներուն վարժապետները հանդանակութեամբ սրճարան մը պիտի բանան Կիրիա-Խանը՝ Ելեմտական խորհրդոյն գանձապետին զրատանը մատերը, թէ որ Յուլիսի ամսականները շուտ մը բոնութեամբ մուրան. ըստ որում տեսուչ, վարժապետք, դռնապան և իրենց երբեմնահաս հարցուփորձապետները կիողութիւն ընելու պէս գալ երթալէ ձանձրացած ըլլալով՝ վերոյիշեալ սրճարանը աղէկ հանգստաւեղի մը կրնայ ըլլալ իրենց. կամայ կամաց դպրատան աշակերտք ալ հոն կը դիմեն իրենց հանապազօրեայ դասառութիւններն ընելու։

Ելեմտականը կը ձգէ Տնտեսականին վրայ և փոխադարձ դարձափոխ (Vice versa)։ Գարձեալ, կը լսենք որ Տնտեսականը ինքնակամաբար ծախքեր ընելով՝ չի մատակարարեր Ելեմտականի դոնէ ծախքերը հատուցանելու զուամբը և Ելեմտականն ալ

արդէն պարտաւորած է մօտ 14000 զուրուշէ քսակազուրկ բլլալու :

Սակայն այն Լրարածոց արդարացի հատուցմունքը՝ որ անշուշտ տուգանք հատուցուած փրկանքի չի նմանիր, քանի որ աղղը շատ աղէկ դիտէ որ իրեն զաւակաց կրթութեան գինն է, հարկ կ'ըլլայ որ պատճառ չի տրուի որ մուրալու, և մուրալու համար կրկին և կրկին դացուի և երթըցուի, որն որ այնքան յաճախ կրկնուած է որ թէ որ այս կենդանի գործիքն ըստն ոտքերնուն մէջ մէկ թեւ կապուած ըլլար, հիմայ որ կտաւները այսքան սուղ են, պիտո խիտ ու աղէկ հիւսուած կտաւներ պիտ' ուտայնան կուէին, իրենց պէս վարպետ կիցնեւ ըստ միջոցաւ :

Օրինակ Օմիւռնական Հայերեանիօն ունիւն :

Պարոն Արդիւնի լաւագոյն Ղեկավար

Տօղրուն խօսամ, ինչդար քի քեզի առջի հեղուն Հայերուն մէջ տեսայ տէի սէվիմիլ եղայ նէ ար, մէկալ թարաֆէն ար շատ տղայայ, աւսանկ մէկ պան մը կ'էնես տէ ինծի խաղար չես ու ար տէի, ամա նէ ի սէ, ես կէնէ քեզի կիւճէնիմ չիմ ըլլիր :

Հիմայ էյէր եօր հաղկիմ օր միւս տուպս ծառք անցնելը տահա ինքին ճի Thieff չի հաներ ես նէ՝ էյէր կ'ուզես նէ՝ կրէ՝ քի ես քու պաշապանդ իմ տէի, ամա քեզի պան մ'ըսիմ տէ՝ անօր կէօրէ տալրանիմիլ եղիր : Անկաճիկ մէկը բիւթիւն - բիւթիւնէ խուլ էրէ՝ մեկալնար ինչ եօր լսես նէ կրէ՝ ամա ան սէհէթը մէջէն տուրս հանէ : Լաքին տուն ըսեր ես եղեր եօր հասարակաց ծառայութիւն էնողը պէաք է քի անոշ խօսայ տէի, աս խօսքը ումիմիլ չիմ էնէր քի քեզի համար ըսեր ես եա, տուն ուրիշներուն հէլդէթաէ հասկցնել ուզած ես, առոր համար տուն քուկին խղմթիկ հայէ՝ պօշ տեղը մի խօնճենար քի անոշ անոշ խօսաս տէ աճի-աճի կուլ տաս, ախպէր, անոշ տալրանիմիլ ըլլիս նէ, սօղրա քեզի անոշ է, անաղոշ է և անոշ է ք'ըսեն : Հիչ եօր չըլլի նէ սօրա խօսքն ալ կը տարձունեն ան շուն է ք'ըսեն հա՛ գիտցած եղիր,

եղէ քի աղ-նի եղանակ է հիմայ, ճիպ վախճիր ա՛ղ-ն, երբոր չիլած պիլէ հայ շուն ըսեն նէ, ղէրէ անղար ան-շները հետեւին քանի մը 'ն (Ոոս, խեւք) Չ (կամ լայ) ունենան քեղ կտոր կտոր կ'ընեն :

Քեղ իմացնելով եօր Ռսիկ - Կանոն-ներդ քեղի առաջնորդ ունենալու ես, սեպէ ղիս այսուհետեւ :

Քու պաշտպանդ Ս'իմ :

ՊԱՐԵՆԻՈՐ ԱՉԴԱՐԱՐԱԶԵԿՈՒՑՈՒՄ 'ՆՈՐ ԱՆԵԼՆԵՐ

Մեաքսեղէն, բրդեղէն, մեաքսաբրդեղէն, ասուեմեաքսեղէն, բամբակեղէն, կտակեղէն, ասուեկտակեղէն, մեաքսակտակեղէն, կտակաբամբակեղէն, և երբեմն առանց բամբակի, դժաւոր, ծաղկանկտր, քսուողիծ, շեղադիծ, օձադիծ, բումբադիծ, անդիծ, նեղադիծ, լայնադիծ, սղաւորի, անսուղի, հարսնութեան, կաքաւահանգէօի, գրսի, ներսի, եկեղեցի երթալու, այցելութեան երթալու, ճամբորդութեան երթալու, անուշ դուրով, տեսակ տեսակ դոյներով, հաստ, բարակ, տեղը խիտ, հարուստի, և աղքատ հարուստի, աղջիկներու, օրիորդներու, տարօք կանանց, մինչև տարօք պառանքերու համար ուտայնանկուած, դործուած, հիւսուած, բանուած, չի բանուած, շուրջքով և անշուրջք, վերջապէս ամէն մէկուհւոյն ախորժակին, քմացը, ընտրութեանը և նորասիրութեանը համաժառ թանկագին Աւելներ են, որոնք հիմայ նորելուի եղած են որ ախիւնայք զանոնք իրենց կէս մէջքէն վար կապեն և փողոցները աւելն ու մաքրեն, որպէս զի իրենց երկինին անձրև ատեն ախիւնը ուն մէջ չի մնան : Վերոյիշեալ աւելները՝ առջևնու եղանակին համար հետադայ Աղայ քծախու հանեն պիտի, որոնց գիմելու են նորասիրութեան հիւք :

- Պ.Պ. Տ. Քասթելի, Թ. 1 և 26 փողոց Պարճիլի :
- Մեղօն Կրօնպախ, Թ. 30 ֆլորանկայ թաղ :
- Ժան Ա. Տանտրիա, Թ. 14 փասաֆ Պօսքովիք :

Սատամ Սիտօր, Թ. 14. փասաֆ Կիլի :

Հին Մեղօն Կարիւս, այժմ Արմաօ և Տիաիէ Թ. 12. փասաֆ Քրամէր :

Վերոյիշեալ Աւելներու վրայ, թէ որ տրտունջ ծագի՝ կը խոստանամք որ նորէն կը դառնամք աւելի մանրամասն խօսքերով :

Հայցակաւք, Հարցակաւք եւ Հաւաղատախախիք :


Կ. Պօլիս. Գ. Է. Մ. Կը խնդրեմք չուշանկ զԱրաճաղիքը - Յ. Մ. Ֆ. Գեռ չի հասան ազգայնականները, - Փարիզ. Տ. Յ. Տ. Անհամբարութեամբ կը պատահի Գիմակին դամ, դէմ, դուժ, դիմ, դէմք :

ՊԵՏԱՆԻ ԾԱՆԾՈՒՆ

Արեւելիկը ամիսը երկու անգամ կը դբուի իւր Գիմակը. մէկը՝ ամառն նորին և միւսը՝ ամառն հինին :

Ո՛ր Գիմակը երեք զրօրէ կ'ուզէ, պէտք է բարեկեցան ընէ, և ո՛ր բարեկեցան զան ընէ շուրջը, պէտք է Գիմակին դրուի : Թէ որ ինչոնք զրկող մ'ի հարկէ Գիմակիս գէմքը տեսնէ կ'ուզէ պէտք կ'ըլլայ որ բարեկեցան ընողէ մ'երթայ մուրայ :

Ամառն հինին կամ նորին ստորագրուելու զիտ պարբերութիւն մը չիկայ, - ինչու որ կամ ամառն մէկէն կամ տասնուհինգէն քրկէ կ'ուզէ նէ բայ՝ կրնայ ստորագրուիլ : Աղգային օրսու մը մատակարարող անձանց ղեղ-ձու մը կը շնորհա ի :



ԹԵՐԱ ԶԵՆԱԶԱՆԵՑ

ԲՈՒՍԵԼՆՈՒԹԻՒՆ

Բուսականները կամ տունկերը դործարանաւոր ու կեանք ունեցող արաբածներ են, կամաւոր շարժումէ և զղացումէ դուրի, որոնց իրարու հետ միակցութիւնը՝ բուսական կարգը կը կազմէ, և այս բուսական կարգին բընական պատմութիւնը՝ Բուսաբանութիւն կ'ըսուի :

ԲՈՒՍԵԼՆՈՒԹԻՒՆ (1) (Botanique) բուսոց զիտութիւնն է, Այս ուսմունքը այնքան ընդարձակ է :

(1) Βοτάνη. Յն. խոս կամ բոյս կը նշանակէ :

որ շատ ճիւղերու կրնար բաժնուիլ :
Բնագիտը պէտք է ճանչնայ , նը-
կարագրէ և դասաւորէ այս զիտութիւ-
նը , որուն բոլոր ճիւղերը մէկէն եր-
կար ժամանակ բուն բուսաբանութեան
տեղ առնուեցաւ , և իւր երեք զլսա-
ւոր ճիւղերը և ստորադասութիւնները
հետեւեալներն են գեո :

Ե. ԼԵՂՈՒՄԵՕՍՈՒԹԻՒՆՐ (Glossologie) բուսոյ գործարաննե-
րուն և իրենց զանազան ձևակերպու-
թեանց արուեստական լեզուն կը սոր-
վեցնէ , ասոր կը վերաբերին 1⁰ Գ-Դ-
Ժարանագրութիւն (Organographie) ,
որ կը նկարագրէ բուսոյ գործարան-
ներուն ձևը և ընդհանր (Symétrie) :
2⁰ Անատոմիո-գրութիւն (Anatomie) որ
կը ցոյցնէ անոնց անըստերիւր կազ-
մութիւնը : 3⁰ Բնաբանութիւն (Phy-
siologie) որ կը նկարագրէ բուսոյ
կեանքին մէջ իրենց գործարաններուն
ունեցած պաշտօնը :

Բ. ԿԵՐԳԵԳԻՏՈՒԹԻՒՆՐ (Taxonomie) բուսականաց ազգակցու-
թեան համեմատ տեսական դասակար-
գութիւնը կը սորվեցունէ . ասոր կը
վերաբերին Տիւտագրութիւն (Phytogra-
phie) բուսոյ տեսակներուն տեղեկու-
թիւնը , և Անուանակցութիւն (No-
menclature) որ ամէն մէկ տեսակին
վրայ Բուսաբաններուն գրած անուն-
ները կը ճանչընէ :

Գ. Վերոյիշեալ երկու ճիւղերուն
որոնք այս զիտութեան բոլոր տեսա-
կան ուսմունքը կը պարունակեն ,
կը յարուի երրորդն ալ , որ ՅԵՐ-
ՄԵՐՅՈՒՄԵ ԲՈՒՄԵԵՆՈՒ-
ԹԻՒՆ (Botanique Appliquée) կ'ըս-
ուի , որ է , բուսականներուն ու մարդ-
կային սեռի մէջ եղած յարաբերու-
թեանց ուսումը . ասոր կը վերաբերին
Ագրիկուլթուր-իւն (Agriculture) , Խ-
արտաշինութիւն (Horticulture) , Ծա-
ռաշինութիւն (Arboriculture) , Խ-
նայողական և Արտաշինական Բո-
տանիկ (Botanique Economique et
Industrielle) ԲՅՉԻԱԿԱՆ ԲՈՒՄԵԵՆՈՒ-
ԹԻՒՆ (Botanique Médicale) և վեր-
ջագէս Պարմալիկ Բո-տանիկ-իւն
(Boanique Historique) :

Բուսաբաններէ ոմանք վերոյիշեալ
երեք զլսաւոր ճիւղերը հետեւեալ
կերպով կը բաժնեն :

1. Բուսական Գործարանագիտու-
թիւն (Organographie Végétale)

որ կը սորվեցնէ բուսոյ գործարան-
ներուն զանազան ձևերը և անոնց ա-
նունները :

2. Բնաբանութիւն և Անատոմիո-
թիւն (Physiologie et Pathologie) որ
է բուսոյ առողջութեան կամ հիւան-
դութեան ժամանակ իրենց գործա-
րաններուն ունեցած պաշտօնին ուսու-
մը :

3. Բուսականական Ագրիկուլթուր-
իւն (Géographie Botanique) կամ Ժանո-
թութիւն բուսականներու թէ ինչ
կարգաւ տեղեկեցին երեսը սփռուեր
են :

4. Կարգագիտութիւն (Taxonomie)
բուսականաց դասակարգութիւնը :

5. Տիւտագրութիւն (Phytographie)
կամ նկարագրութիւն բուսականաց .
օգտակար 'ի ճանաչել' թէ իրենց
կազմուածքով թէ գործածութեամբ-
քը և թէ իրենց ձգած յիշատակնե-
րովը :

Վերոյիշեալներէն , երբեմն գոր-
ծարանագիտական և երբեմն խտամը-
շտական նիւթերու վրայ պիտի զբաղի
Գիմակը :

Այն դրբերը որոնք գործարանագի-
տական ու կարգագիտական տեղեկու-
թիւններով ծաղկանց վրայ կը խօսին ,
Ծաղկաբանութիւն (Flore) կ'ըսուին :

Գ Ի Տ Բ

Լոնտոնի ողջ տարւոյս Համաշ-
խարհական Ըրտացոյցին մէջ գրուած
զանազան մեքենական ճարտարու-
թեանց հետ , հետեւեալ նշանակու-
թեան արժանի գործիքն ալ կայ , որ
կովերը կ'իյնայ մէկէն : Ասոր
փորձն ընելով , նայեցան որ երեք
վայրկեանի մէջ կով մը կ'իյնայ շատ
աղէկ յաջողեցաւ : Հնարողը Ամերի-
կացի է : ԻԼԼ. ԻԼԸ. 24 :

— Ստեբս Սալթայի մօտ արժա-
նագին և շահաւոր դանձ մը գտնուե-
ցաւ Ֆրէկիի նեղուցին մէջ , այն է ,
ուրտուն գրկաշափ խորութեամբ դըտ-
նուած Բուստաստանը , որուն տեսակը
շատ աղնիւ է : Կը հաստատեն որ բո-
լոր կղզւոյն խորութիւններուն մէջ
ուրիշ շատ բուստաստաններ կան , ո-
րոնք հարստութեան աղբիւր մը պիտի
ըլլան հաւաքողներուն :

ԻԼԼ. ԻԼԸ. 24 :

ԽՈՏԱՄՅՈՒՆԱԿԱՆ

Ընկոյթներ

Տաքութիւնը և խոնաւութիւնը բու-
սական կենաց էական սկզբունքներն
են , երբոր աս երկու տարբեաց հետ
մաքուր հողիկիդ (Terreau) ներդրե-
ծութիւնն ալ միանայ , բաց օդին
ու պարտեզին մէջ չի բուսնի լիքներդ
ասոնց միջոցաւ կրնաս առաջ բերել :
Վերոյիշեալները մէկտեղ բերելու
համար Ընկոյթին ունեւալու ես , թէ
գժուար արմատացող բոյսերուդ հա-
մար և թէ աշխու տեսակ ծաղկանցդ
սերմերուն համար , որոնք բաց օդին
մէջ անկարելի է , մինչև հիմայ դիտ-
ցուած միջոցներով , արմատացնելու և
ծլեցնելու : Ընկոյթները որոնց մէջ
տնկածներդ պիտի խնամես երեք տե-
սակ կ'ըլլան , տաք , դաղը և ցուրտ ,
որոնց վրայօք ուրիշ առթիւ պիտի
խօսինք :

ԱՅԵՏԲԱՆԱՆ

Չմիւսնիա 14 Օգոստոս : Աս հըն-
դետասանեակիս մէջ մեծ գործառնու-
թիւններ չեղան , թէ և գործոց սկը-
սելու ժամանակներն են :

ԲԱՄԲԱԿԱՆԵՐԸ շարունակ աղէկ կը
ծախուին , և այնքան ուղուեցան ու
գին գտան որ շատ վերգաստաններ
իրենց կահուց և կարասեաց բամբակ-
ները քակելով հակեցին ու աղէկ գի-
ներով վաճառեցին : Արեւը մինչև
մէկ ամիս կ'ըսկին գալ : Գինները
հաստատ են և 540 է մինչև 890 կը
ծախուին :

ՏԱՐՈՒՆԵՐԸ քիչ մը ծախուեցան , և
վերջին գինները 245 է մինչև 265 էին ,
ըստ տեսակին : Արեւը սկսան գալ :

ՉՈՒԹԱՆԵՐԸ շարունակ իջնուել
վրայ են : ԱԼ այսուհետեւ գինները
քիչ մը կ'ածընան : Մինչև հիմայ
հասածները 3,560 բեռ են , և գինե-
րը 90 զուրուշէ մինչև 220 :

ՉԱՐԻՉԵՐԸ 65 զըշի ծախուեցաւ
կենդանաբ : ԿԱՐՄԻՆԵՐԸ 3 1/2 էն 4
հօխան և ՍԱԼԻՄԻՆԵՐԸ 4 1/2 էն 5 :

ՓՈԽԵՆԵԿԱԿԵՐՈՒԹԻՒՆՔ

Լոնտոն , 3/ա . . . 422 — 422 1/2
Սարսիլիա 493 — 495
Թրեքսթ 372 — 375 :

ՏԱԿԱԿԵԱԼ Ի ԳՈՐԾԱՍՏԱՆ ՏԵՏԵ-
ԵԱՆ Թ. 50 ՌԵԿՏԻ ՔԱՏԵՍԻ
ՀԱՅՈՑ ԹԱԳԱՐ . Ի ՉԱԿԻՆԻԱ
ՅԱՄՍԵԱՆՆ ՕԳՈՍՏՈՒ 24. 1862 :